Բնապահպանական հարկի հաշվարկման կարգը

2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքով բնապահպանական վճարի փոխարեն սահմանվել է բնապահպանական հարկ: Հարկային օրենսգիրքը սահմանել է «բնապահպանական հարկ» հասկացությունը, դրա վճարման նպատակը, հաշվարկման և վճարման կարգը: Հարկային օրենսգրքի համաձայն բնապահպանական հարկը պետական բյուջե վճարվող հարկ է, որը ծառայում է *«բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման»* նպատակին[1]: Հարկային օրենսգիրքին համապատասխան բնապահպանական հարկով հարկման օբյեկտներ են համարվում, մասնավորապես.

1) մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումը.
2) ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքը.
3) ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները՝

ա. հատուկ հատկացված տեղերում տեղադրելը,

բ.հատուկ հատկացված տեղերում պահելը.

Հարկային օրենսգիրքը սահմանում է մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի ցանկը, ինչպես նաև բնապահպանական հարկի դրույքաչափերը:Վերջինս փոշու, ածխածնի մոնօքսիդի, ազոտի օքսիդների, ծծմբային անհիդրիդի, քլորի, քլորոպրենի հաշվետու ժամանակաշրջանում արտանետված յուրաքանչյուր տոննայի համար նախատեսել է դրամային դրույքաչափ:

Մթնոլորտային օդն աղտոտող այլ նյութերի համար, որոնց մասով արտանետումների փաստացի ծավալները գերազանցում են օրենսդրությամբ սահմանված կարգով մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու թույլտվություններով նախատեսված սահմանային թույլատրելի արտանետումների ծավալը, կամ որոնց մասով բացակայում են մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու թույլտվությունները, կամ թույլտվություններում նշված չեն սահմանային թույլատրելի արտանետումները, կիրառվող դրույքաչափը մեկ տոննայի դիմաց հաշվարկվում է հետևյալբանաձևով՝

$$Դ_{օդ} = 900 \text{ դրամ/ ՍԹԿ}$$

որտեղ՝ «Դօդ»-ն դրույքաչափն է, «ՍԹԿ»-ն օդում տվյալ նյութի միջին օրական սահմանային թույլատրելի խտությունն է (կոնցենտրացիա)[2]:

[1]Հարկային օրենսգիրք, հոդված 161 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141938
[2]*Ibid.*, հոդ. Հարկային օրենսգիրք հոդ.167

Երևանի և ազգային պարկերի տարածքներում արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար դրույքաչափերն ավելացվում են 1.5 անգամ[3]:

Հարկային օրենսգիրքը ֆիքսված դրույքաչափեր է նախատեսում նաև հաշվետու ժամանակաշրջանում ջրային ավազան կախված նյութերի, ամոնիակային ազոտի, թթվածնի կենսաբանական պահանջի,նավթամթերքի, պղնձի, ցինկի, սուլֆատների, քլորիդների, նիտրիտների, նիտրատների, ընդհանուր ֆոսֆորի, դետերգենտների, ծանր մետաղների աղերի, ինչպես նաև ցիանի և ցիանի միացությունների մեկ տոննա արտահոսքի համար:[4]

Բոլոր մյուս վնասակար նյութերի և միացությունների համար, որոնց մասով արտահոսքի փաստացի ծավալները գերազանցում են ջրօգտագործման թույլտվություններով նախատեսված ՝ կեղտաջրերում վնասակար նյութերի և միացությունների սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալները, կամ բացակայում են ջրօգտագործման թույլտվությունները կամ ջրօգտագործման թույլտվություններով նշված չեն սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալներ, կամ ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոններով նախատեսված սահմանային թույլատրելի արտահոսքերի ծավալները որոշված չեն կիրառվող դրույքաչափը մեկ տոննայի դիմաց հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Դ_{ջուր} = 10\ 000 \text{ դրամ}/ՍԹԿ_{ձկն}$$

որտեղ՝ «$Դ_{ջուր}$»-ը դրույքաչափն է, «$ՍԹԿ_{ձկն}$»-ն ձկնատնտեսական նպատակով օգտագործվող ջրում տվյալ նյութի կամ միացությանսահմանային թույլատրելի կոնցենտրացիան է[5]:

Սևանա լճի ջրահավաք ավազան, Հրազդանի կիրճի տարածքում Հրազդան և Գետառ գետեր վնասակար նյութերի և միացությունների արտահոսք իրականացնողների համար դրույքաչափերը կրկնապատկվում են:[6]

Հարկային օրենսգիրքը սահմանել է նաև հատուկ հատկացված տեղերում (բացառությամբ արդյունաբերական հրապարակների) արտադրության և (կամ) սպառման թափոնների յուրաքանչյուր տոննայի՝ հաշվետու ժամանակաշրջանում սահմանված կարգով տեղադրման (պահման) համար բնապահպանական հարկի դրույքաչափերը: Օրենսգրքով սահմանվել են նաև արդյունաբերական հրապարակներում արտադրության և (կամ) սպառման թափոնների (բացառությամբ ընդերքօգտագործման թափոնների) յուրաքանչյուր տոննայի՝ հաշվետու ժամանակաշրջանում սահմանված կարգով մեկանգամյա պահման համար հարկի դրույքաչափերը, հատուկ հատկացված տեղերում՝ պոչամբարներում, արտադրական լցակույտերի, մակաբացման ապարների տեղամասերում և (կամ) համանման

[3] *Ibid.*, հոդ. 167, մաս 2
[4] *Ibid.*, հոդ. 169, մաս 1
[5] *Ibid.*, հոդ. 169, մաս 1
[6] *Ibid.*, հոդ. 169, մաս 2

վայրերում ընդերքօգտագործման թափոնների հաշվետու ժամանակաշրջանում մեկանգամյա տեղադրման կամ պահման համար բնապահպանական հարկի դրույքաչափերը, որոնք կգործեն 2021թ. հունվարի 1-ից: Միաժամանակ, մինչև 01.01.2021թ. արդյունաբերական հրապարակներում արտադրության և սպառման թափոնների յուրաքանչյուր տոննայի տեղադրման (պահման) համար բնապահպանական հարկը ենթակա է հաշվարկման «Բնապահպանական վճարի դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «բ» կետով սահմանված դրույքաչափերով:

Բնապահպանական հարկի դրույքաչափեր

Փոշու, ածխածնի մոնօքսիդի, ազոտի օքսիդների, ծծմբային անհիդրիդի, քլորի, քլորոպրենի և մթնոլորտային օդն աղտոտող այլ նյութերի մեկ տոննայի արտանետման դիմաց Հարկային օրենսգրքով նախատեսված են հետևյալ դրույքաչափերը՝

Մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութեր	**Դրույքաչափը հաշվետու ժամանակաշրջանում արտանետված յուրաքանչյուր տոննայի համար (դրամ)**
Փոշի	1 800 դրամ
Ածխածնի մոնօքսիդ	240 դրամ
Ազոտի օքսիդներ (վերահաշված ըստ ազոտի երկօքսիդի)	14 800 դրամ
Ծծմբային անհիդրիդ	1 800 դրամ
Քլոր	12 000 դրամ
Քլորոպրեն	90 000 դրամ
Մթնոլորտային օդն աղտոտող այլ (սույն աղյուսակում չնշված) նյութեր, որոնց մասով արտանետումների փաստացի ծավալները գերազանցում են օրենսդրությամբ սահմանված կարգով մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու թույլտվություններով նախատեսված սահմանային թույլատրելի արտանետումների ծավալը, կամ որոնց մասով բացակայում են մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու թույլտվությունները, կամ թույլտվություններում նշված չեն սահմանային թույլատրելի արտանետումները	$Դ_{օդ}$ = 900 դրամ/ՍԹԿ, որտեղ ՍԹԿ-ն օդում տվյալ նյութի միջին օրական սահմանային թույլատրելի խտությունն է (կոնցենտրացիա)

ՀՀ-ում գրանցված (հաշվառված) և շահագործվող բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար՝ արտանետման

շարժական աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկը ըստ դրանց խմբերի հարկման բազայի նկատմամբ հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Բեռնատար ավտոտրանսպորտային միջոցի խումբը	Տարեկան դրույքաչափը (դրամ)
Բեռների փոխադրման համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոցներ, որոնց առավելագույն զանգվածը չի գերազանցում 3.5 տոննան	5000
Բեռների փոխադրման համար նախատեսված՝ 3.5 տոննայից ավելի, բայց ոչ ավելի, քան 12 տոննա առավելագույն զանգված ունեցող ավտոտրանսպորտային միջոցներ	10000
Բեռների փոխադրման համար նախատեսված՝ 12 տոննայից ավելի առավելագույն զանգված ունեցող ավտոտրանսպորտային միջոցներ	15000

Ջրային ռեսուրս անմիջապես և (կամ) կենտրոնացված ջրահեռացման ցանցեր և այլ ջրային համակարգեր կախված նյութերի, ամոնիակային ազոտի, նավթամթերքի, պղնձի, ցինկի, սուլֆատների, քլորիդների, նիտրիտների, նիտրատների, ընդհանուր ֆոսֆորի, դետերգենտների, ծանր մետաղների աղերի, ինչպես նաև ցիանի և ցիանի միացությունների մեկ տոննայի արտանետման դիմաց Հարկային օրենսգրքով նախատեսված դրույքաչափեր՝

Արտանետվող վնասակար նյութեր և միացություններ	Դրույքաչափը հաշվետու ժամանակաշրջանում արտահոսքի յուրաքանչյուր տոննայի համար (դրամ)
Կախված նյութեր	5,300 դրամ
Ազոտ ամոնիակային	5,100 դրամ
Թթվածնի կենսաբանական պահանջ	18,400 դրամ
Նավթամթերք	204,600 դրամ
Պղինձ	1,023,900 դրամ
Ցինկ	1,023,900 դրամ
Սուլֆատներ	100 դրամ
Քլորիդներ	30 դրամ
Նիտրիտներ	511,500 դրամ
Նիտրատներ	1,100 դրամ
Ընդհանուր ֆոսֆոր	40,000 դրամ
Դետերգենտ (լվացող քիմիական) նյութեր	102,300 դրամ
Ծանր մետաղների աղեր	511,500 դրամ

Ցիան և ցիանի միացություններ	511,500 դրամ
Այլ վնասակար նյութեր և միացություններ՝ սույն աղյուսակում չնշված այն վնասակար նյութերը և միացությունները, որոնց մասով արտահոսքի փաստացի ծավալները գերազանցում են ջրօգտագործման թույլտվություններով նախատեսված՝ կեղտաջրերում վնասակար նյութերի և միացությունների սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալները, կամ բացակայում են ջրօգտագործման թույլտվությունները, կամ ջրօգտագործման թույլտվություններում նշված չեն սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալները, կամ ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոններով նախատեսված սահմանային թույլատրելի արտահոսքերի ծավալները որոշված չեն	$Դ_{ջուր}$ = 10000 դրամ/$ՍԹԿ_{ձկն}$ որտեղ՝ $ՍԹԿ_{ձկն}$-ն ձկնատնտեսական նպատակով օգտագործվող ջրում տվյալ նյութի կամ միացության սահմանային թույլատրելի կոնցենտրացիան է

Հատուկ հատկացված տեղերում՝ թափոնների տեղաբաշխման տեղերում, պոլիգոններում, թափոնակուտակիչներում, աղբավայրերում, համալիրներում և (կամ) շինություններում արտադրության և (կամ) սպառման թափոնները տեղադրելու համար բնապահպանական հարկի դրույքաչափեր՝

Արտադրության և (կամ) սպառման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	**Դրույքաչափ 1 տոննայի դիմաց**
Առաջին դասի վտանգավորության թափոններ	48,000 դրամ
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	24,000 դրամ
Երրորդ դասի վտանգավորության թափոններ	4,800 դրամ
Չորրորդ դասի վտանգավորության թափոններ (բացառությամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող օպերատորների համար՝ ֆիզիկական անձանց առաջացրած չտեսակավորված սպառման թափոնների)	1,500 դրամ
Ոչ վտանգավոր թափոններ (բացառությամբ ընդերքօգտագործման թափոնների և աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող օպերատորների համար՝ ֆիզիկական անձանց կողմից առաջացրած տեսակավորված սպառման թափոնների)	600 դրամ
Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող օպերատորների համար՝ ֆիզիկական անձանց կողմից առաջացրած տեսակավորված և չտեսակավորված սպառման թափոններ	60 դրամ

Հատուկ հատկացված տեղերում՝ արդյունաբերական հրապարակներում արտադրության և (կամ) սպառման թափոնների (բացառությամբ ընդերքօգտագործման թափոնների) մեկանգամյա

պահման համար բնապահպանական հարկը 2021 թվականի հունվարի 1-ից հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով՝

Արտադրության և (կամ) սպառման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում պահված յուրաքանչյուր տոննայի համար (դրամ)
Առաջին դասի վտանգավորության թափոններ	62400
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	31200
Երրորդ դասի վտանգավորության թափոններ	6240
Չորրորդ դասի վտանգավորության թափոններ	1950
Ոչ վտանգավոր թափոններ	780

Հատուկ հատկացված տեղերում՝ պոչամբարներում, արտադրական լցակույտերի, մակաբացման ապարների տեղամասերում և (կամ) համանման վայրերում ընդերքօգտագործման թափոնների մեկանգամյա տեղադրման կամ պահման համար բնապահպանական հարկը 2021 թվականի հունվարի 1-ից հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով.

1) ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների հանքավայրերի համար.

Ընդերքօգտագործման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	**Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում պահված յուրաքանչյուր տոննայի համար (դրամ)**
Առաջին դասի վտանգավորության թափոններ	62400
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	31200
Երրորդ դասի վտանգավորության թափոններ	6240
Չորրորդ դասի վտանգավորության թափոններ	1950
Ոչ վտանգավոր թափոններ (այդ թվում՝ մակաբացման ապարներ)	780

2) մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի համար.

Ընդերքօգտագործման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	**Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում պահված յուրաքանչյուր տոննայի համար (դրամ)**
Առաջին դասի վտանգավորության թափոններ	250
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	120

Երրորդ դասի վտանգավորության թափոններ	25
Չորրորդ դասի վտանգավորության թափոններ	8
Ոչ վտանգավոր թափոններ (այդ թվում՝ մակաբացման ապարներ)	3

Մինչ 2021թ. հունվարի 1-ը արդյունաբերական հրապարակներում թափոնների տեղադրման (պահման) համար բնապահպանական հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով՝

	Դրույքաչափը՝ ըստ տեղադրման ժամանակահատվածի (դրամ)		
	մինչև 1 տարի պահման դեպքում	**1-ից 3 տարի ներառյալ պահման դեպքում**	**3 տարուց ավելի պահման դեպքում**
Առաջին դասի վտանգավորության թափոններ	0	16 000	48 000
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	0	8 000	24 000
Երրորդ դասի վտանգավորության թափոններ	0	1 600	4 800
Չորրորդ դասի վտանգավորության թափոններ	0	500	1 500
Ոչ վտանգավոր թափոններ (բացառությամբ լեռնա-արդյունահանող իրավաբանական անձանց կողմից տեղադրվող ոչ վտանգավոր թափոնների)	0	200	600